

ԿԱՐՄԻՔ

Հովհաննես Գեորգու Խորիկյանի «Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը» վերնագրով դոկտորական ատենախոսության մասին

Ատենախոսության հեղինակը իր գիտական գործունեության առաջին իսկ օրերից նվիրվեց Աքեմենյան Պարսկաստանի վարչաքաղաքական բաժանման խնդրին և առ այսօր հավատարմորեն շարունակում է այդ խնդրի լուսաբանման գործը: Օգտվելով առիթից նշեմ, որ կարող է ոմանց թվալ թե այդ հարցի վերաբերյալ արդեն ասելիք չի կարող լինել, սակայն իրականում, ինչպես նախորդ ուսումնասիրողների աշխատությունները, այնպես էլ հենց ատենախոսի հետազոտությունները ցույց են տալիս, որ դեռևս շատ առանձին խնդիրներ կարիք ունեն հատուկ ուսումնասիրության:

Աքեմենյան տերությունը համաշխարհային պատմության ընթացքում այն քաղաքական կառույցն էր, որն իր տեսակի մեջ եզակի է իր զբաղեցրած վիթխարի տարածքում ընդգրկված բազմալեզու, բազմամշակույթ, բազմակացությամբ բնույթով: Այդ տերության իրական էությունը բնութագրելիս անհնար է չնկատել հանդուրժողականության ակնառու գերակշռությունը նրա կազմում գտնվող բազմաթիվ ժողովուրդների քաղաքական, մշակութային, տնտեսական ու հոգևոր արժեքների նկատմամբ: Աքեմենյաններին կարծես թե առանձնապես չէին հետաքրքրում նվաճվածների ինքնության դրսևորումները, Նրանց համար կարևորը լոյալությունն էր, իսկ ինչ վերաբերում է Կենտրոնի հետ ինտեգրմանը, ապա այդպիսի խնդիր կարծես թե դրված չէր, ինչը տեսնում ենք, օրինակ, Հռոմեական կայսրության կամ Բյուզանդիայի պարագայում: Լոյալության յուրաքանչյուր դրսևորում ավարտվում էր Կենտրոնի արագ միջամտությամբ: Թերևս այդ էր պատճառը, որ կենտրոնի և ծայրագավառի փոխհարաբերությունները սկսում էին ճեղքեր տալ, ինչը բնականաբար հանգեցնում էր էական ցնցումների (օրինակ, մ.թ.ա. V դարի կեսերին Եգիպտոսի ապստամբությունը, մ.թ.ա. IV դարի սկզբներին փոքրասիական սատրապությունների փաստացի անկախացումը և այլն): Ընդ որում, որպես կանոն, ապստամբությունների նախաձեռնողները ոչ այնքան տեղերի քաղաքական վերնախավն էր, որքան հենց արքեմենյան սատրապները առաջինների հետ համագործակցած:

Հաջորդ կարևոր նկատառումը սատրապությունների տարածքների շարունակական վերաձևություններն էին, որը ստիպում է ենթադրել արքաների

ջանքերը գտնելու դրանց օպտիմալ սահմանները, հաշվի առնելով յուրաքանչյուր կոնկրետ տարածաշրջանի առանձնահատկությունները:

Եվ երրորդ նկատառումը, որը թերևս առավել կարևոր է, Աքեմենյան տերության անկումից հետո իրանական նյութական և հոգևոր մշակույթի ավանդույթների շարունակությունն է, որը մենք տեսնում ենք ամենուր՝ Էգեյան ծովեզերքից մինչև Կենտրոնական Ասիա և Հնդկաստան: Այդ հանգամանքը մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ Աքեմենյան տերության հանդուրժողական կեցվածքը որևէ կերպ չէր հակասում նվաճված ժողովուրդների շահերին, այլ, որքան էլ որ տարօրինակ հնչի, նպաստում էր նրանց ինքնության պահպանմանը և զարգացմանը:

Այս ընդարձակ ներածականից հետո փորձեմ ներկայացնել Հ.Խորիկյանի ատենախոսության վերաբերյալ կարծիքս:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածությունը հստակ պատկերացում է տալիս ատենախոսության գիտական հարցադրումների և մի շարք հայեցակարգային կարևոր տեսակետների մասին: Համակարգված և հստակ կերպով ներկայացված են թեմայի ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, արդիականությունը, ժամանակագրական սահմանները: Դրանք հիմնավորված են և բխում են խնդրի նպատակային հետազոտման էությունից: Այստեղ հանգամանորեն ներկայացված է օգտագործված գրականության և աղբյուրների տեսությունը: Ատենախոսության սկզբնաղբյուրների և գրականության ցանկը ևս կազմված է գիտական սկզբունքով:

Ատենախոսության գլուխների ընտրությունը ճիշտ է նաև մեթոդաբանական առումով, քանի որ շարադրանքի կառուցվածքը սկզբից ինչև վերջ օրգանական ամբողջություն է կազմում: Դրանցից չորսը նվիրված են Տերության չորս խոշոր տարածաշրջաններում տեղակայված սատրապություններին - Փոքր Ասիա, Արևելյան Միջերկրական և Հյուսիսային Աֆրիկա, Կենտրոնական սատրապություններ, այդ թվում Հայկական լեռնաշխարհ, Արևելյան սատրապություններ: Վերջին՝ հինգերորդ գլխում քննարկվում են վարչական բաժանման սկզբունքները, վերաբնակեցումները և հարակից որոշ հարցեր:

Ես կանգ չեմ առնի յուրաքանչյուր գլխում ներկայացված խնդիրների քննությանը, այլ կփորձեմ դրանք ներկայացնել ընդհանրացված եղանակով, այլապես ուղղակի ժամանակը չի բավականացնի:

Բացի թվով շուրջ 20 սատրապությունների ընդգրկած տարածքի, դրանց բնակչության էթնիկական պատկանելության խնդիրներից և տեղաշարժերից, հեղինակը հնարավորության սահմաններում փորձել է կատարել տեղագրական ճշգրտումներ և առաջարկել է քաղաքական պատմության մի շարք կարևոր հարցերի նորովի լուսաբանումներ: Ընդ որում հեղինակը իր առաջարկությունները հիմնավորում է հույն պատմիչների և աշխարհագրագետների աշխատություններում պահպանված տեղեկությունների հանգամանալի վերլուծության միջոցով:

Հովհաննես Խորիկյանին հաջողվել է տարալեզու սեպագիր սկզբնաղբյուրների, դասական հեղինակների տեղեկությունների, հնագիտական նյութի վերլուծությամբ ներկայացնել Աքեմենյան տերության երկդարյա պատմության վարչական կառուցվածքը՝ կատարելով հիմնավոր եզրակացություններ և առաջադրելով նոր տեսակետներ: Սեպագիր տարբեր աղբյուրների, արամեերեն, փոյուգերեն, կարիերեն, լիկիերեն և այլ գրավոր տեքստերի, ինչպես նաև տարբեր դարաշրջանների անտիկ հեղինակների, Աստվածաշնչի տեղեկությունների քննությունը կատարվել է ժամանակի և տարածության մեջ՝ վերհանելով վարչական և էթնիկական այն իրողություններն ու տեղաշարժերը, որոնց ենթարկվում էր Աքեմենյան Պարսկաստանի վարչաքաղաքական բաժանման համակարգը մ.թ.ա. VI-IV դարերում:

Հեղինակի կողմից կատարված պատմաաշխարհագրական ճշգրտումները թույլ են տվել Աքեմենյան տերության և վերջինիս կազմում գտնվող երկրների ու ժողովուրդների քաղաքական պատմության հիմնահարցերն այլ լույսի տակ մեկնաբանել՝ վերանայելով պատմագիտության մեջ տասնամյակներ շարունակ արմատավորված կարծիքները:

Հատկապես կարևոր է նշել, որ հեղինակի ենթադրությունները հիմնված են աղբյուրագիտական համակողմանի քննության վրա՝ հաշվի առնելով նաև մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետները: Հեղինակն օգտագործել է խնդրին առնչվող մասնագիտական հարուստ գրականություն, որտեղ դասական ուսումնասիրողների տեսակետները ներկայացվում են ժամանակակից գիտական ձեռքբերումների համատեքստում:

Եվ իհարկե անհրաժեշտ էմ համարում ներկայացնել մի շարք դիտողություններ, որոնց հիմնական մասը մասնակի բնույթ ունեն և աշխատությունը հրատարակության ներկայացնելիս դրանք կարելի է հեշտությամբ ճշգրտել:

1. Հեղինակը ամենուր հույն հեղինակների աշխատություններում առկա հատուկ անունները ներկայացնում է տառացի ընթերցմամբ, որը, ի դեպ, հայալեզու հրատարակություններում համատարած հենց այդպես էլ տրվում է: Օրինակ,

Լյուդիա, Լյուկիա, Պամֆյուլիա և այլն: Սա թերացում համարել չի կարելի, սակայն բանն այն է, որ, տուրք տալով հայագիտության մեջ արմատավորված ավանդապաշտությանը, մենք շարունակում ենք այդպես վարվել: Հունական այբուբենի *յուփսիլոն* տառը դեռևս հնագույն ժամանակներում արտասանվել է *ի*, այսինքն պետք է գրել Լիդիա, Լիկիա, Պամֆիլիա և այլն: Հին տեղանունների թուրքերեն տառադարձման մեջ էլ կան ոչ ճշգրիտ գրություններ, այսպես, Բայրաքլի (Բայրաքլի փոխարեն), Էլմալի (Էլմալի փոխարեն և այլն):

2. Հունալեզու աղբյուրներում *լելեզներ* կոչվող ցեղանվան մասին (էջ 32): Հեղինակը ճիշտ է նշում, որ այս անունը հույները պետք է փոխառեն իսթերից (հղվում է Ի.Դյակոնովի կարծիքը), որոնք բազմիցս հիշատակում են *լուլախիսի* ցեղանունը և որը մեկնաբանվում է որպես "օտարական": Նշեմ, որ այս տերմինը լայնորեն կիրառվել է նաև ասորեստանյան աղբյուրներում (*լուլումե* ձևով), նշանակելով Միջագետքից հյուսիս ապրող լեռնական աննվաճ ցեղերին նշելու համար: Առ այսօր այս բառը որևէ ստուգաբանություն չունի և նույնիսկ պարզ չէ դրա պատկանելության հարցը որևէ լեզվի:

3. Հեղինակը էջ 41-ում օգտագործում է "լուվիական Անատոլիա" տերմինը առանց բացատրության: Ճիշտն ասած, պարզ չէ թե ինչ նպատակով է այն օգտագործվում, որպես դարաշրջանի անվանում թե Փոքր Ասիայի մի ինչ-որ շրջանի կապակցությամբ: Այստեղ անհրաժեշտ է ճշգրտել այս տերմինի կիրառման նպատակը:

4. Հաջորդ էջում առկա է "Բրոնզի դարաշրջան" արտահայտությունը: Խոսքը մ.թ.ա. II հազ. իսթական աղբյուրներում հիշատակվող Լուկկա երկրի մասին է: Եթե օգտագործվում է հնագիտական տերմին, ապա պետք է գրել "Ուշ բրոնզի դարաշրջան", սակայն տվյալ պարագայում տեղին չէ հնագիտական տերմինաբանության կիրառությունը, հատկապես եթե խոսքը գրավոր աղբյուրներով լավ վկայված ժամանակաշրջանի մասին է:

5. Հաջորդ և վերջին դիտողություն-ցանկությունը կապված է Աքեմենյան տերության XIII և XVIII սատրապությունների խնդրին, որը հատկապես հայագիտական հրատարակություններում բազմիցս բանավեճերի առարկա է դարձել և շարունակում է մնալ այդպիսին: Այս խնդիրը ժամանակին բարձրացրել էր մեր երջանկահիշատակ ընկեր Բ.Հարությունյանը և այն իր շարունակությունը գտավ ի դեմս Հ.Խորիկյանի: Ասեմ, որ հին Հայաստանի կարգավիճակը Աքեմենյան տերության տիրապետության շրջանում, դրա վարչական բաժանումը զուտ գիտական առումով առանձնակի կարևորություն չի ներկայացնում: Խնդիրը այլ է, ինչի մասին ես բազմիցս խոսել եմ հեղինակի հետ: Իմ կարծիքը տարբերվում է աստենախոսի

կարծիքից, սակայն ես չեմ համարում, որ նա սխալվում է: Ամեն ինչ հնարավոր է, սակայն մի խնդիր է ծագում կապված Տերության անմիջական հարևանությամբ գտնվող նման վիթխարի սատրապության առկայության հետ, մի սատրապության, որն իր չափերով թերևս գերազանցում էր աքեմենյանների բուն տարածքը: Երևի հետագայում Հ.Խորիկյանը կփորձի ինչ-որ կերպ բացատրել իրերի այդպիսի վիճակը:

Այս առնչությամբ ես կցանկանայի ասել նաև հետևյալը: Հայկական լեռնաշխարհի վարչաքաղաքական կառուցվածքին առնչվող յուրաքանչյուր ուսումնասիրություն, բացի անտիկ հեղինակների աշխատություններում հաղորդվող տեղեկություններից, պետք է հաշվի առնի Աքեմենյան տերության կազմավորմանը նախորդող ժամանակաշրջանի իրողությունները: Տվյալ պարագայում խոսքը Ուրարտուի անկման շրջանի մասին է, Ուրարտու – Աքեմենյան դարաշրջան անցումը: Հատկապես հնագիտական հետազոտություններում այս անցումը շատ դեպքերում գրեթե անհնար է տեսնել զուտ հնագիտորեն: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ աքեմենյաններն այստեղ ինչ-որ օտար մարմին չէին, այլ ներկա էին վաղուց ի վեր: Սրա արտահայտությունը պետք է համարել նաև աքեմենյանների նյութական մշակույթի վրա ուրարտականի էական ազդեցությունը (ապադանա, պատկերագրություն և այլն): Կարելի է ենթադրել, որ աքեմենյանները լավ ծանոթ էին Հայկական լեռնաշխարհում տիրող էթնոքաղաքական իրավիճակին և սատրապական համակարգի ձևավորման ընթացքում չէին կարող կամայական սկզբունքով կատարել բաժանումները:

Կարծում եմ, ամեն դեպքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այս հանգամանքի վրա և հետագայում փորձել էլ ավելի լայն տեղ հատկացնել հնագիտական ուսումնասիրությունների տվյալների վրա:

Հովհաննես Խորիկյանի դոկտորական ատենախոսությունն ինքնուրույն գիտական աշխատանք է՝ գրված գիտական պատշաճ մակարդակով: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված մենագրություններում և հողվածներում:

Ատենախոսությունը գիտական արժեք ներկայացնող, ավարտուն, համալիր և հաջողված հետազոտություն է, որը դուրս է գալիս իրանագիտության սահմաններից և իր տեսակի մեջ յուրահատուկ հետազոտություն է:

Կարծում եմ, որ Հովհաննես Խորիկյանի դոկտորական ատենախոսությունը բոլոր չափանիշներով լիովին բավարարում է Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտության գծով դոկտորական ատենախոսությանը ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի կանոնադրության պահանջներին, իսկ նրա հեղինակը միանգամայն արժանի է ներկայացվելու 006 «Համաշխարհային

պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդին՝
հայցելու պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս

պ.գ.դ., պրոֆ. Ա.Վ.ՔՈՍՅԱՆ



29.10.2020

Հասցեագրված 65 ՝ Ղ Ղ Ք 1666
Ներկայացրեցի իմ կողմից
գիտ. գործերից . պ.գ.դ. զույգելը
Գ. Ա. Վաչագանյան

29.10.2020 թ.